ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

N ՆԱ/3528-2022 «___»_____ 202__ թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի
նախագահ Շուշան Դոյդոյանին
(Հասցե՝ Երևան, Կենտրոն,
Փավստոս Բյուզանդի Փ., 1/3, 4-րդ հարկ
էլեկտրոնային հասցեն՝ foi@foi.am)

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2022 թվականի ապրիլի 1-ի N 532979 էլեկտրոնային հարցմանը՝ հայտնում ենք հետևյալը.

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությամբ կարող են զբաղվել պետական լիազոր մարմնից որակավորման վկայական ստացած անձինք, որոնք էլ իրականացնում են նաև ինքնակամ շինությունների չափարգրման և հաշվառման աշխատանքները, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի՝ գրանցող մարմինը պատասխանատվություն չի կրում որակավորում ստացած անձանց՝ սույն հոդվածում նշված աշխատանքների որակի և տվյալների հավաստիության համար:

Հայտնում ենք նաև, որ Կադաստրի կոմիտեի կողմից ներդրված չափագրման առցանց գրասենյակում ինքնակամ շինությունների հաշվառման փաթեթներով հնարավոր չէ տրամադրել տեղեկատվություն հանրային սեփականություն հանդիսացող հողամասերում կառուցված ինքնակամ շինությունների վերաբերյալ, որի մասին Ձեզ հայտնել ենք 2022 թվականի ապրիլի 1-ի N ԱԳ/3208-2022 գրությամբ (կցվում է):

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝ Նարինե Ավագյան

Recoverable Signature

X

ՆԱՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Signed by: AVAGYAN NARINE 5902890683

Կատարող՝ Ջ. Թադևոսյան
Հողաշինարարության բաժնի պետ՝ Մ. Մկրտչյան
Հեռ.՝ 060-474119